«Ժամկետանց պեստիցիդների պաշարների ոչնչացում և կայուն օրգանական աղտոտիչներով (ԿՕԱ) աղտոտված տարածքների աղտազերծում՝ քիմիկատների անվտանգ կառավարման միջոցառումների շրջանակներում» ՄԱԶԾ-ԳԷՖ լայնածավալ ծրագիր

ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ և ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2017 թ. ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏ
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության նիստերի դահլիճ
16 հունիսի, 2017թ.
17:00-20:00

Մասնակիցներ

Ծրագրի կառավարման խորհրդի անդամներ		
1.	Դավիթ Տոնոյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար (համանախագահող Վ. Գաբրիելյանին փոխարինող)
2.	Խաչիկ Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ, Ծրագրի կառավարման խորհրդի համանախագահ
3.	Լիլիա Շուշանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի խորհրդական
4.	Աշոտ Հարությունյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
5.	Դմիտրի Մարիյասին	ՄԱԶԾ մշտական ներկայացուցչի տեղակալ
ՄԱԶԾ		
6.	Գայանե Ղարագեբակյան	Ծրագրի համակարգող, ՄԱԶԾ
7.	Վարդան Ծերունյան	Ծրագրի տեխնիկական առաջադրանքի ղեկավար, ՄԱԶԾ
8.	Քրիստինա Տերեշչատովա	Ծրագրի օգնական, ՄԱԶԾ
9.	Գագիկ Կարապետյան	Ծրագրի փորձագետ, ՄԱԶԾ
Մասնակիցներ		
10.	Արտավազդ Դավթյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության պետ
11.	Հովհաննես Եմիշյան, Փրկարար ծառայության գնդապետ	ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության պետ
12.	Կարինե Եսայան	ՀՀ ԳՆ աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության այգեգործության զարգացման և բույսերի պաշտպանության բաժնի պետ
13.	Իրինա Հակոբյան	ՀՀ ԲՆ վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

14.	Նունե Բակունց	ՀՀ առողջապահության նախարարություն, «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ
15.	Լիլիկ Սիմոնյան	«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ, Հիգիենայի և էկոլոգիական ռիսկերի բաժնի պետ
16.	Ալբերտ Մանուկյան	«Էլեկտրոննախագիծ» ՓԲԸ տնօրեն
17.	Էդիտա Վարդգեսյան	Ծրագրի փորձագետ
18.	Դավիթ Հարությունյան	Ծրագրի փորձագետ
19.	Մարատ Գրիգորյան	ԵՊՀ, Երկրաբանական ֆակուլտետի դեկան
20.	Հակոբ Մկրտչյան	Հրավիրված երկրաբան, ԱՄՆ, Կալիֆորնիա

<u>Ներկայացված փաստաթղթեր / նյութեր.</u>

- Տեղեկանք ՀՀ Կոտայքի մարզում վտանգավոր քիմիական թափոնների (ՎՔԹ) պահեստավորման և կառավարման ազգային կենտրոնի հիմնաման խնդրի և դրա շուրջ ծավալված քննարկումների վերաբերյալ;
- «Վտանգավոր քիմիական թափոնների ժամանակավոր պահպանման պահեստի/կենտրոնի հիմնում Հրազդանի վարչական տարածքում տեղակայված ԱԻՆ-ի պահեստի հիման վրա» ներկայացման փաստաթուղթ:

<u>Ներածություն/Բացման խոսք</u>

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար պրն. Դավիթ Տոնոյանը, որի առաջարկով՝ որպես արտահերթ նիստ կազմակերպվել է Խորհրդի և Կոմիտեի համատեղ հանդիպումը նվիրված ՀՀ Կոտայքի մարզում վտանգավոր քիմիական թափոնների (ՎՔԹ) պահեստավորման և կառավարման ազգային կենտրոնի հիմնաման խնդրի վերաբերյալ: Պարոն Տոնոյանը ձայն տվեց Խորհրդի համանախագահող Խաչիկ Հակոբյանին, ով ողջունեց մասնակիցներին, կարևորեց նիստի քննարկման թեման՝ հակիրճ ներկայացնելով, որ ՀԿ-ների և Հրազդան ազդակիր համայնքի ներկայացուցիչների հետ մի շարք հանդիպումներ են կայացել, լսել և կարևորվել են նրանց վեր հանած խնդիրներն ու անհանգստությունները, որոնք հաշվի առնելով չի դիտարկվում նպատակահարմար նախորոշված վայրում վերակառուցման ճանապարհով հիմնել վտանգավոր քիմիական թափոնների (ՎՔԹ) պահեստ, այլ նպատակահարմար է դիտարկել այլ ավելի ապահով տեղանք:

Այնուհետև տկն. Գայանե Ղարագեբակյանը հանդես եկավ «Վտանգավոր քիմիական թափոնների ժամանակավոր պահպանման պահեստի/կենտրոնի հիմնում Հրազդանի վարչական տարածքում տեղակայված ԱԻՆ-ի պահեստի հիման վրա» ներկայացումով, որով հանգամանորեն ներկայացվեց հարցի կարևորությունը և տարածքի ընտրության պատմությունը, պահեստի տեղակայման դիտարկված հնարավոր տարբերակները, ՎՔԹ ազգային պահեստավորման և կառավարման կենտրոնի նախագծման և վերակառուցման ժամանակացույցը, առնչվող իրավական-նորմատիվ կարգավորման պահանջները, երկրորդային նորմատիվային պահանջները, անվտանգության նպատակով ինժեներա-շինարարական և գործառնական պլանի միջոցառումները:

Ներկայացմանը հաջորդեց ծրագրի կառավարման խորհրդի անդամների կարծիքների փոխանակումը: Պարոն Դ. Մարիյասինը նշեց, որ ծրագիրը ներկայացրել է խնդրի տեխնիկական կողմը, սակայն քաղաքական որոշումը գնտվում է կառավարության դաշտում:

Պարոն Դ. Տոնոյանը ցանկացավ ճշտել, պահեստի տարածքի փոփոխության դեպքում ինչպիսի ճկունություն ունի ծրագիրը, և արդյոք հնարավոր է պահեստի տեղը փոխելու դեպքում ժամանակ չկորցնելու նկատառումով նախագծային աշխատանքները շարունակել նույն կապալառուի՝ «Էլեկտրոննախագիծ» նախագծային կազմակերպության հետ, ինչին ի պատասխան պարոն Մարիյասինը նշեց, որ անհրաժեշտ է պահպանել ՄԱՋԾ գնումների գործընթացի պահանջները: Քննարկվեց հարցը «Հայբերրիության» նախկին պահեստների օգտագործման հնարավորության վերաբերյալ: Տիկին Գ. Ղարագեբակյանը պարզաբանեց, որ այդ պահեստները կամ քանդված են կամ գտնվում եմ մասնավոր սեփականության տակ, ինչը հաստատվեց ՀՀ գյուղնախարարության ներկայացուցիչ, Ծրագրի խորհրդատվական կոմիտեի անդամ տիկին Կ.Եսայանի կողմից: Պարոն Հ.Եմիշյանը նշում կատարեց, որ տարածքը պետք է լինի պետական, քանի որ դա նաև դիտարկվում է, որպես պետության համաֆինանսավորման առումով ներդրում ծրագրի շրջանակներում:

Քննարկման ընթացքում դիտարկվեց հարցը, թե որ տեսակի թափոններ է հնարավոր այդ պահեստում պահպանել, և անդրադարձ կատարվեց այն հարցի, որ պահեստը պետք է դառնա մեկ ազգային կենտրոն վտանգավոր թափոնների պահպանման համար, և այդ հարցը քննարկվեց պահեստի անվտանգության տեսակետից: Պարոն Խ. Հակոբյանը կարծիք արտահայտեց, որ հարկավոր է հաշվի առնել հասարակության մտահոգությունը, և ավելի հանգամանորեն հետազոտություններ իրականացնել այդ տարածքում, նույնիսկ առաջարկեց, որ անհրաժեշտ է լրացուցիչ հորատանցքեր փորել այդ նպատակով, առաջարկեց նաև տարանջատել նախագծման և բուն շինարարական աշխատանքների համար նախատեսվող գումարները, որպեսզի հստակ երևա որքան գումար է հատկացվելու պահեստի շինարարության/վերակառուցման համար: Ի պատասխան, ներկայացվեց, որ պահեստի նախագծային աշխատանքների մրցույթում ներկայացված գինն է 62,500 ԱՄՆ դոլար, և, որ Ծրագրում հատկացված է 175,000 ԱՄՆ դոլար պահեստի անվտանգության համակարգերի համար:

Տիկին Լ.Շուշանյանը նույնպես շեշտեց հանրային քննարկումների և լրացուցիչ դաշտային աշխատանքների իրականացման կարևորությունը՝ մասնավորապես նոր հորատանցքի կառուցումը, նշելով, որ հասանելի արխիվային տվյալները հին են, իսկ խնդիրն այնպիսի ռազմավարական նշանակություն ունի, որ նրա վերաբերյալ որոշում կայացնելու համար միջոցները չպետք է խնայել:

Տիկին Գ. Ղարագեբակյանը լրացուցիչ պարզաբանում կատարեց, որ տարածքին հարող առկա երկու հորատանցքերից նմուշառումներ են կատարվել, ստացվել են թարմ տվյալներ և ներկայացվող եզրակացությունները հիմնված են նաև այդ տվյալների վրա: Տիկին Գ. Ղարագեբակյանը նշեց նաև, որ նոր հորատանցքներ բացելը երկար ժամանակ և լուրջ ռեսուրսներ է պահանջում, ինչը հաստատեց ներկա գտնվող «Էլեկտրոննախագիծ» կազմակերպության ղեկավարը («Էլեկտրոննախագիծ»՝ Կոտայքի պահեստը նախագծող կապալառու կազմակերպություն):

Պարոն Ա. Հարությունյանը նույնպես շեշտեց հասարակության կարծիքի կարևորությունը: Այնուհետև քննարկումներ ընթացան թունաքիմիկատների/պեստիցիդների տեսակների և դրանց համար անհրաժեշտ պահպանման վայրի նպատակահարմար ընտրության շուրջ:

Պարոն Դ. Տոնոյանի ներկայացմամբ կարծիք արտահայտեցին նաև հրավիրյալ փորձագետները՝ Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան պարոն Մարատ Գրիգորյանը և «EON GEOCONSULTING», Երկրաբանական խորհրդատվական ընկերության տնօրեն, ԱՄՆ Կալիֆորնիա նահանգում կողմից երկրաբանական ոլորտում հավաստագրված փորձագետ պարոն Հակոբ Մկրտչյանը, որոնց պնդմամբ ուսումնասիրված փաստաթղթերի տրամադրած տվյալների հիման վրա հնարավոր չէ տալ դրական եզրակացություն այդ տարածքում նման կառույց ստեղծելու համար: Պարոն Մ. Գրիգորյանը նշեց,

որ Հայաստանի տարածքի հիդրոերկրաբանական պատկերը թույլ չի տալիս (բացի մեկ վայրից) նմանատիպ պահեստ կառուցել:

Պարոն Դ. Մարիյասինը նշեց, որ ծրագրի միջոցները հատկացված են հստակ նպատակի հասնելու համար, այն է՝ երկրից վերացնել Նուբարաշենում կուտակված կայուն օրգանական աղտոտիչ հանդիսացող ժամկետանց պեստիցիդների պաշարները: Նա նշեց նաև, որ այս պարագայում Կոտայքի պահեստը հանդիսանում է միայն միջանկյալ պահեստ, արտափորված պեստիցիդների ժամանակավոր պահպանման համար, մինչ ոչնչացումը և, որ ծրագիրը նպատակ չունի որևէ կերպ վնաս հասցնելու շրջակա միջավայրին:

Պարոն Ա. Մանուկյանը մեկնաբանեց, որ առաջադրանքը իրականացնելիս, ընկերությունը հանդիպում է մի շարք խնդիրների: Նա նշեց, որ բոլոր արխիվային տվյալները իրենց հասանելի են: Ընկերությունը, որպես լուծում, առաջարկում է ստեղծել փակ չոր պահեստ, և մնացած մանրամասները ինչպես ներկայացվեց Ծրագրի համակարգողի կողմից: Պարոն Ա. Մանուկյանը շեշտեց, որ սպասում են վերջնական որոշման իրենց աշխատանքների հետագա ընթացքը կազմակերպելու համար:

Պարոն Դ. Մարիյասինն ընդգծեց, որ ծրագրի սկզբնակետը, որի համար ԳԷՀ-ը հատկացրել է գումարներ՝ Նուբարաշենի խնդրի լուծումն է, որի մեջ Կոտայքի հարցը միայն միջանկյալ պահեստի ստեղծում է ենթադրում: Այդ հարցը պահանջում է քաղաքական որոշում կառավարության կողմից, որի համար ՀՀ ԱԻ նախարար պարոն Դ.Տոնոյանը խնդրեց մեկ ամիս ժամանակ այլընտրանքային վայր գտնելու համար:

ԱՌԱՋԱՐԿՎԵՑ

1. Կոտայքի ՎՔԹ կառավարման և միջանկյալ պահեստի նախագծային աշխատանքները ժամանակավոր դադարեցնել (սառեցնել) մինչև տեխնիկական լուծումներ գտնելը և քաղաքական որոշում կայացնելը, ինչի համար առաջարկվեց մեկ ամիս ժամկետ:
2. Շարունակել աշխատանքները Հրազդանի հանրության հետ:

ՈՐՈՇՎԵՑ

Կոտայքի ՎՔԹ կառավարման և միջանկյալ պահեստի նախագծային աշխատանքները ժամանակավոր սառեցնել մինչև գտնվեն համապատասխան տեխնիկական լուծումներ և կայացվի որոշում:

Ստորագրեցին՝

Խաչիկ Հակոբյան	Վրեժ Գաբրիելյան
ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ,	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ,
Ծրագրի կառավարման խորհրդի համանախագահ	Ծրագրի կառավարման խորհրդի համանախագահ